ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/271

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ կադաստրի կոմիտե
Մասնակից՝ «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, պահնորդական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15876-2021 գրությամբ «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 24.09.2021թ. թիվ ԳԵ/8599-20 գրության հիման վրա, 30.09.2021թ.-ին «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 30.09.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 04.10.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/271 համարի ծածկագիրը:

13.10.2021թ.-ին և 29.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.10.2021թ.-ին:

2. <u>ՀՀ կադաստրի կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ կադաստրի կոմիտեն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 24.09.2021թ. թիվ ԳԵ/8599-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարված պահնորդային ծառայությունների մատուցման մրցույթին նվազագույն գնային առաջարկ ներկայացրած և առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԷՅ ԴԻ ԷՄ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ն, սակայն վերջինս հրաժարվում է ընթացակարգին հետագա մասնակցությունից՝ պատճառաբանելով, որ ընկերության աշխատակիցը սխալմամբ Հավելված 2-ի 3-րդ և 5-րդ այունակներում ծառայության մեկ տարվա արժեքի փոխարեն նշել է մեկ ամսվա արժեքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ «ԷՅ ԴԻ ԷՄ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ն չի դիտարկվում որպես ընտրված մասնակից:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգի մասնակից՝ «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.10.2021թ.-ին գրությամբ դիմել է «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15876-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/271 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով 09.09.2021թ.-ին հայտարարվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ն:

iii. «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ն 22.09.2021թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ հայտում պահանջվում էր նշել ծառայության տարեկան գումարը, իսկ Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը փաստացի սխալ է՝ չի համապատասխանում Հրավերով սահմանված պահանջին, ուստի խնդրել է Պատվիրատուին և բողոքարկման հանձնաժողովին չեղարկել Մասնակցի կողմից ներկայացված հայտը:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.09.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից 22.09.2021թ.-ին ներկայացված գրությունը, որոշել է մերժել Մասնակցի կողմից ներկայացված հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15876-2021 գրությամբ «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո

գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով 09.09.2021թ.-ին հայտարարված «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ն 22.09.2021թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ հայտում պահանջվում էր նշել ծառայության տարեկան գումարը, իսկ Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը փաստացի սխալ է՝ չի համապատասխանում Հրավերով սահմանված պահանջին, ինչով պայմանավորված՝ «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ն խնդրել է Պատվիրատուին և բողոքարկման հանձնաժողովին չեղարկել Մասնակցի կողմից ներկայացված հայտը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից 22.09.2021թ.-ին ներկայացված գրությունը, 22.09.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրությամբ որոշել է մերժել Մասնակցի կողմից ներկայացված հայտը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ն, Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո, հրաժարվելով «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15876-2021 գրությամբ «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/271 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էյ Դի Էմ Սեքյուրիթի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**